և Խաչի Կիրիեվի տնով (Պոլիցեսկի փողոցի ծայրով) վերջանում։ Այն թաղը յօժարակամ ընդունեց Գրիգոր քահանայ Գրիգորեանց։

Հինգերորդ թաղը սկսվում է ծովափից Պոլիցեսկի փողոցից ու գալիս հասնում է Կոլի բաղնիսի, և ապա Շահլամեանի տան կողքով մտնում է Յովհաննէս բէկ Տէր Գասպարեանցի տան փողոցը, և ուղիղ գծով բարձրանում է մինչեւ այդ փողոցի ծայրը, իւր մէջ ընդունելով մալականի այգին, Բաղերիովի սկվերը, Ղանի Թափան, Աղքատանոցը, և վերջանում Սեւ քաղաքի սահմանում, այսինքն երկաթուղու անցնելու կամուրջը։ Այս թաղը յօժարակամ ընդունեց Եղիշէ քահանայ Գեղամեանց։

Որոշեցինք՝ Առաջին՝ ամէն մի քահանայ պարտաւոր է իւր վերցրած այս թաղերի ժողովրդականաց թիւը յընթացս մէկ շաբաթուայ ցուցակագրել ամենայն ճշդութեամբ ու ներկայացնել ի հաստատութիւն թեմիս Գերապատիւ Առաջնորդին։

Երկրորդ՝ սոյն թաղի ժողովրդականաց թուի մէկի կամ միւսի աւելի կամ պակաս լինելը ոչ երբէք կարող է առիթ լինել դժգոհութեան կամ տրտնջանաց, այլ իւրաքանչիւր քահանայ անպայման պէտք է բաւականանայ այնքան թիւ ժողովրդով՝ որքան երեւեցաւ իւր ընդունած թաղում։

Երրորդ՝ եթէ այս թաղերից մէկից կամ միւսից ժողովրդականք առաւել կամ պակաս թուով փոխադրուեցան ուրիշ թաղ, այդ փոխադրվողները ծուխ չեն համարուելու այն քահանային, որի թաղը փոխադրուեցան, այլ այն քահանայի, որի թաղում բնակվում էին նախքան սոյն բաժանումը կատարուելը, և որի ցուցակումը արդէն մտել են միանգամայն։

Չորրորդ՝ ծխաբաժանութեան միւս պայմանները և կարգ ու կանոնները գրուած են (և քահանայից համար պարտադիր են) այն կանոնագրութեան մէջ, որբազան թեմական Առաջնորդը տուել է ի հրահանգութիւն։

Հինգերորդ՝ սոյն արձանագրութիւնը, յետ մեր ստորագրութեան ներկայացնել թեմիս Առաջնորդին ի տեղեկութիւն։

Յովհէն աւագ քահանայ Միրզաբէկեանց
Գրիգոր քահանայ Գրիգորեանց
Եղիշէ քահանայ Գեղամեանց
Ղեւոնդ քահանայ Տէր Աստուածատուրեանց